

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

04 հուլիսի 2019թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 16-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների քննարկում: Զեկուցող՝ Ա. Սաղյան
2. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական խորհրդի հաշվետվությունը՝ 2018-2019 ուս. տարում կատարված աշխատանքների մասին:
Զեկուցող՝ ՈւԽ նախագահ Անի Խաչատրյան
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների քննարկում:
Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանին, ով նշեց, որ 2018-2019 ուսումնական տարում ևս հաջողությամբ կարողացանք

կազմակերպել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների անցկացումը:

-Ինչպես գիտեք, այս տարի հանձնաժողովի նախագահը Հայաստանի դեղագործության ոլորտում առաջատար դիրք գրավող «ԼԻԿՎՈՐ» Դեղագործական ձեռնարկության գլխավոր տնօրեն Սերգեյ Ռուբենի Մաթևոսյանն էր, ով փաստում է, որ ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանություններն ընթացել են բարձր մակարդակով, լավ կազմակերպված և բոլոր պահանջներին համապատասխան: Հատկապես պետք է նշել պաշտպանության ներկայացված մագիստրոսական թեզերի արդիականությունը, կիրառական նշանակությունը՝ հայրենական դեղագործության համար և կատարման բարձր որակը: Պաշտպանությունների արդյունքները գոհացուցիչ են, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Ֆարմացիայի ինստիտուտի որոշ շրջանավարտներ արդեն իսկ աշխատանքի հրավեր են ստացել Լիկվոր ընկերության կողմից:

Մագիստրոսական թեզերի պաշտպանություններին մասնակցել են 51 ուսանող, որոնցից 23-ը ստացել են գերազանց, 17-ը՝ լավ, 11-ը՝ բավարար գնահատական: Բողոքարկումներ չեն եղել: Ավարտական աշխատանքների պաշտպանություններին մասնակցել են 52 շրջանավարտ, որոնցից 19-ը ստացել են գերազանց, իսկ 33-ը՝ լավ գնահատական:

- Ինչ կարծիքներ կա՞ն այս հարցի վերաբերյալ:

Ելույթ ունեցան՝ Բ.գ.դ., Ռ. Հովհաննեսյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ովքեր նշեցին, որ և՛ ուսանողները և՛ պաշտպանությունների հանձնաժողովի անդամները գոհ են արդյունքներից: Գիտխորհրդի մյուս անդամները ևս միաձայն փաստեցին որ պաշտպանություններն ընթացել են լավ կազմակերպված և առողջ մթնոլորտում:

Ա. Սադյանը հորդորեց ամբիոնների վարիչներին շարունակել իրենց հետևողական աշխատանքը՝ սահմանված ժամկետների պահպանման, նախապաշտպանությունների պատշաճ կազմակերպման հարցում:

Որոշեցին՝ (միաձայն) դրական գնահատել 2018-2019 ուս. տարում անցկացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքները:

2. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական խորհրդի հաշվետվությունը՝ 2018-2019 ուս. տարում կատարված աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՈւԽ նախագահ Անի Խաչատրյան

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության նախագահ Անի Խաչատրյանին, ով ներկայացրեց ընթացիկ ուսումնական տարում ուսանողական խորհրդի կողմից կատարված աշխատանքերը: Մասնավորապես նշեց, որ 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ուսխորհրդի կողմից կազմակերպվել է առաջին կուրսեցիների իրազեկման միջոցառում, երդման արարողություն, ուսանողների օրվան նվիրված միջոցառում, ուսանողական ռեկտորատ: Կազմակերպվել է նաև Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին նվիրված միջոցառում, բաց դռների օր: Անի Խաչատրյանը նշեց, որ բաց դռների օրվան մասնակցել են թվով 5 դպրոցներ՝ Երևանից և Հրազդանից: Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել են նաև ուսոցողական խաղեր և մրցույթներ՝ «Այլ կերպ», «Ի՞նչ որտե՞ղ, ե՞րբ» և «Ամենախելացին»: Ամենախելացին մրցույթին մասնակցել է Ֆարմացիայի ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող Ռուբեն Իսրայելյանը և Ֆակուլտետում զբաղեցրել է 1-ին տեղը, իսկ միջֆակուլտետային մրցույթում՝ 2-րդ տեղը:

Որոշեցին՝ (միաձայն) դրական գնահատել Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական խորհրդի կողմից 2018-2019 ուս. տարում կատարված աշխատանքները:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա.Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա.Դադայան